ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«04» նոյեմբերի 2019 թվականի N:277 ք.Գյումրի

ԼԵՅԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող, առողջապահության բաժնի պետ Լ.Ասլանյանի 2019 թվականի նոյեմբերի 1-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող, առողջապահության բաժնի պետ Լեյլի Ասլանյանին 2019 թվականի նոյեմբերի 4-ից 5-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպական գրասենյակի միջև համագործակցության համաձայնագրի շրջանակներում կատարվող Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաքելության ընթացքում Երևանում կայանալիք «Առողջությունը խթանող դպրոցներ» նախաձեռնության աշխատաժողովին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը երկու օր՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ից 5-ը ներառյալ:

3. Լեյլի Ասլանյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Մովսիսյանին:
4. Լեյլի Ասլանյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է